

ՀԱԶԻՆԵ ՓԻՐԻԻ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԺԱՅՌԱՓՈՐ ԴՌԱՆ ՍԵՊԱԳԻՐ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Բադալյան Մ. («էթնոս» էթնո-մշակութային գիտական
հետազոտությունների կենտրոն, Հայաստան)
miq.badalyan@gmail.com

Բանալի բառեր՝ Ուրարտու, Հազինե Փիրի, ժայռափոր դռներ,
Տուշպա, Իշպուհինի, Խալդի, սեպագիր:

Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգության
համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում Վանա լճի
արևելյան ավազանում կերտված ուրարտական սեպագիր
արձանագրություններով ժայռափոր դռների (Հազինե Փիրի,
Աշտակերտ, Մհերի Դուռ) ուսումնասիրությունները: Վերջիններս
կերտվել են Իշպուհինի, ապա Իշպուհինի և Մենուա արքաների
համատեղ գահակալության շրջանում (մոտ. Ք. ա. IX դարի վերջին
քառորդ) և հանդիսացել են ուրարտական պետության
կարևորագույն ծիսապաշտամունքային բացօթյա համալիրները:

Ուրարտական սեպագիր արձանագրությամբ ամենավաղ
ժայռափոր դուռը Հազինե Փիրին է: Վնասված սեպագիր
արձանագրությամբ միախորշ այս դուռը կերտվել է Իշպուհինի
արքայի հրամանով. ունի 2.80 մ բարձրություն, 4.6 մ լայնություն և
գտնվում է Վանի թագավորության Տուշպա (ներկայիս Վան)
մայրաքաղաքից 12 կմ հարավ: Ցավոք այս հուշարձանը մեծապես
վնասված է: Բանն այն է, որ ժամանակին գանձագողերը գայլիկոնով
անցքեր են արել դռան վրա՝ կարծելով, թե «դռան» ետևում գանձեր
են պահված, իսկ 1945 թ. հետո՝ իրենց համար թվացյալ «դուռը»
պայթեցնելու և իբր դռան ետևում գանձեր գտնելու նպատակով
բարբարոսաբար նաև պայթուցիչ տեղադրել այդ անցքերից մեկի մեջ,
որից էլ առաջացած պայթյունի հետևանքով այս հուշարձանը
մեծապես վնասվել է: Հազինե Փիրիի դռան վրայի վնասված
արձանագրությունում Իշպուհինի արքան տեղեկացնում է մրգատու

պարտեզ ու խաղողուտ տնկելու և այն հտիրոջը՝ (ուրարտ.՝ **euri**) նվիրաբերելու մասին:

Ընդհանրապես ուրարտական սեպագիր արձանագրություններում տեր բառը գրեթե միշտ վերագրվել է Վանի թագավորության գերագույն աստված Խալդիին և ընդամենը մեկ դեպքում, այն էլ իր գաղափարագիր համարժեքով (**ÉN**) տարերքի աստված Թեյշեբային: Այս արձանագրությունում «տեր» մակդիրն առանց Խալդի աստծո հիշատակվելու փաստը տարակարծությունների տեղիք է տվել: Խնդրին անդրադարձած գիտնականների մի մասը կարծում է, որ Հազինե Փիրիի ժայռափոր դռան արձանագրության մեջ հիշատակվող տերն ամենայն հավանականությամբ Խալդին է (Ե. Գրեկյան): Կա կարծիք նաև, որ այս ժամանակահատվածում Իշպուհինն դեռևս չէր ընտրել իր աստծուն (Մ. Սալվինի): Թերևս գերակշռող է այն տեսակետը, որ այստեղ նկատի է առնված ոչ թե Խալդին է, այլ տարերքի աստված Թեյշեբան (Ա. Դինջուլ, Օ. Բելլի, Մ. Սալվինի, Ա. Բաթմազ և ուրիշներ), քանի որ Թեյշեբայի խուռիական գուգահեռ Թեշուբին ևս վերագրվել է ուրարտերեն **euri**-ի խուռիերեն համարժեք **ewri** մակդիրը:

Մեր կարծիքով՝ ավելի ուշ հայտնաբերված հնագիտական սկզբնաղբյուրները և հատկապես Վերին Անձավ ամրոցից հայտնաբերված հինգ օղերից բաղկացած նվիրատվական շղթայի ասուրերեն արձանագրությունը, որտեղ իր տիտղոսաշարում Իշպուհինի արքան իրեն անվանում է Խալդի աստծո «ստվերը», իսկ Խալդիին՝ իր «տերը», կարող է վկայել այն մասին, որ դեռևս Հազինե Փիրիի ժայռափոր դռան կերտման ժամանակ Խալդին արդեն հանդիսանում էր Իշպուհինի արքայի և ուրարտական տերության գլխավոր աստված: Հայտնի է, որ նախքան ուրարտական տերությունում տեղական սեպագիր համակարգի կիրառումը ուրարտացիները գրում էին նոր ասուրերենով և նորաստրական սեպագիր ոճով: Հետևաբար, ամենայն հավանականությամբ, բրոնզե օղակներից բաղկացած շղթան պետք է ավելի վաղ թվագրվի Հազինե Փիրիում ուրարտական սեպագրով թողնված արձանագրությունից:

Այս տեսակետը կարծես թե հիմնավորվում է ևս մի քանի փաստարկներով: Նախ՝ Իշպուկինի կառավարման ժամանակաշրջանին պատկանող մեզ հայտնի ոչ մի արձանագրությունում հիշատակություն չկա Թեյշեբայի մասին, և հենց նույն արձանագրություններում արդեն գոյություն ունենալու հարցին որպես տեր ընկալելու «բանաձևը»:

Այսպիսով, վերը նշված փաստարկները զարգացնում և ավելի հավանական են դարձնում այն տեսակետը, որ Հազինե Փիրիի ժայռափոր արձանագրության մեջ հիշատակված տերը, ամենայն հավանականությամբ, ոչ այլ ոք է, քան ուրարտական պետության հովանավոր աստված Խալդին: Իհարկե, մենք չենք բացառում նաև վերը հիշատակված մյուս տարբերակները:

Ուսումնասիրության մեջ Հազինե Փիրիի ժայռափոր դռան օրինակով քննարկվում են նաև որոշ հարցեր, որոնք վերաբերում են ուրարտական սեպագիր արձանագրություններով ժայռափոր դռների ժառանգությանն ու նրանց ընկալմանը:

ON THE CUNEIFORM INSCRIPTION OF THE URARTIAN ROCK-CUT DOOR
OF HAZINE PIRI

Badalyan M. (“Ethnos” Scientific Centre of Ethno-Cultural Researches, Armenia)